







խնէ Գեղեցիկ քնքոյշ կերպարանքներս որոնք անշուշտ Աստ-  
 ւիկ զիցուհու հակադասակերպ ակտի լինելն Զեթանես Հայերի  
 ջերմեռանդութիւնն ան Աստուգիկ զիցուհին այնքան մեծ էր  
 եւ հայեցողութեան այնքան վսեմ որ իւր գաղափարի մէջ  
 գեղեցիկութեան լծակից տղամարդի անենալաւ յայտնութիւնն  
 համարած է Գործիչն իւր Գաղութիւնն որ Հայաստանի  
 պէս երկրու մարգարեալ զարգացած էր այն անտիճանի որ  
 քաջութեան նախնայականքը Վահագն արքայն աստուածների  
 դասը գասգծեալ նորս քաջութեան չափն էր այնչափ մեծ  
 էր որ ժողովոյն զէրկարող հաւատալն որ այդպիսի մի  
 անձը մարդկոցին ծնունդ լինի քննհակառակն իւր երգերի մէջ  
 արձանացուցած է նորս գերբնական ծնունդը երկնի եւ երկրի  
 եւ ծիրանի ծովի երկունքից Ահա այն աստուածացեալ արքայն  
 Վահագն ճիգրանեան որ Գործիչն էր Գեղեցիկ Հայոց հոգից իւր  
 իւր մի չար զժնկի որ ազատեց Հայ ժողովուրդին չար էակներ  
 իւր աղեցութիւնից իւր անհուն քաջութեամբ մարտելով  
 վնասակար Թարսերի դէմ աստ արքայն Վահագն արքայն է  
 գեղեցիկ զիցուհու լծակիցը Աստուկան ամուսինը զուգաւոր  
 րութիւնն որ արդարեւ Հայոց գաղափարներին հակառակ չէ  
 եւ ներկայացնում է մի խորհրդաւոր անասկութիւն այսօր  
 եւս մեր գիւղական լեռնային համադրիւնների մէջ ճշդիւ կատա-  
 թոնում է այդ խորհուրդը անամարդն այն ժամանակ միայն  
 կարող է ամուսնանալ երբ նա իւր սրտի քնտրածը կարողա-  
 ցած է քաջութեամբ փախցնել օրիորդի հօր անից րեւ աստ  
 այդ սկզբունքն է այդ հեթանոսական հնութիւն կրօն սովո-  
 րութիւնն է պատճառ որ այսօր շատ հայաբնակ գիւղերում  
 գեւանուանց գիտակցութեան կատարում են ազգիկ փախցնելը  
 եւ այդ համարում է փակալին մի տեսակ անարթնութիւնն  
 որին շատ ներդրամութեամբ է նայում Հայ ժողովուրդը Եւ  
 Այն իսկ սկզբունքն է պատկերացնում եւ Արտաշէս Բի վերայ  
 հիւսած երգը որի մէջ պարզ երեւում է թէ ժողովուրդն եր-  
 գում է Արտաշէսի տղամարդութիւնը որ գետն անցաւ եւ  
 փախուց Սաթինիկին այս կողմ :

- սոց յ իսկ Գեղեցիկ արիւրքայն Արտաշէս ի սեան գեղեցիկ  
 - արտաշէս Եւ հանեալ զոսկէօղ շիկախոկ պարանն մասնս Կոլ 6ամ



Այս յարդարում ասի երկրաւոր պատկերը՝ որ պաշտուում էր Վահագնեան մեհեանում, կոչուում էր Վահագն Վիշապասը:

Արամագրի երրորդ գուստրն է նաև գիցուհին, որի պատկերը գտնուում էր Բարձր Հայքի Դարանաղեաց գաւառում Թիլի աւանում ոչ հեռի այժմու Երզնկայ քաղաքից. որովհետեւ նոյն աւանում տեղաւորեց Տիգրան Բ. Յունաց Աթենասի պատկերը, որ իմաստութեան աստուածուհի էր, այդ պատճառով կարելի է կարծել, որ նաև գիցուհին էլ իմաստութեան կամ աւելի ճիշդ ասած հնարագիտութեան մասնաւոր աստուածուհի լինէր. հնարագիտութեան ենք ասում, որովհետեւ այդ հանճարն յատուկ է միայն կանանց սեռին եւ մասնաւորապէս Հայ կանանց, որոնք մի տեսակ հանճարեղ տանտիրուհիւն անելու վարժ են եւ սակաւ կարողութեամբ մեծամեծ բաներ են գլուխ բերում իրենց ընտանեկան շրջանի մէջ, չնայելով այն նեղ ու կաշկանդեալ պայմաններին, որոնց մէջ գտնուած է Հայ կինը գարաւոր ժամանակներում: Մեզ այնպէս է երեւում, որ նաև գիցուհին Հայ կնոջ նշանակութիւնը պիտի ներկայացնէր մեր հեթանոս նախնեաց աչքին եւ մանաւանդ պիտի համարուէր ճշմարիտ արտայայտութիւն այն հայացքների, որ ունեցած է Հայ ժողովուրդը կնոջ նշանակութեան վերայ. կինն այսօրուայ Հայի աչքումն էլ ոչ այլ ինչ է, եթէ ոչ գերդաստան սիւնը, այլ մարդու ամենահաւտարիմ ընկերակիցը եւ գլխաւորապէս նորա տունը, նորա զաւակները հոգացող եւ պահպանողը: Հայ սպանարդը կարծես թէ իւր տան կառավարութեան մէջ մի օտար ոմն է. ամենայն տնտեսութիւն, ամենայն խնայողութիւն, ամենայն հիւրասիրութիւն սպահանջուել է եւ պիտի պահպանուի տան մէջ միմիայն տանտիրուհի շնորհիւ: Հայ կնոջ աւելի բարձր նշանակութիւնը մեզ յայտնի է եւ հնագրական պատմութիւնից մեծք գիտենք, որ Տիգրան Ա ի քոյրն Տիգրանուհի մինչեւ անգամ իւր հնարագիտութեամբ փրկած է իւր ելքօր քաղաքական պատիւը: Սա-

Սնան համար նշանաւոր համաստեղութեանց մէկի մէջ դասուած է եւ Հայոց նախնայն Հայի: Այս առթիւ, եթէ յաջողի մեզ, մի այլ անգամ աւելի ընդարձակ կը խօսինք:

նոս գայեկի հնարագիտութիւններին և պարտական Մանատրուկ արքայն իւր կեանքը կամ նորա որդուն Արտաշէս մանկանն ազատողն էլ մի Սանտոի նման կին և կրած մեղ յայտնի է նմանապէս Եղիշէի նկարագրութիւնից և դարի կանանց դիւցազնական անձնութիւնը կանա նց որ իրենց հեռաւոր ամուսինների կեանքն ազատելու համար մատամբ իւրեանց վաստակեցին եւ կերակրեցան եւ զկարգեալ ռոճիկ նոցա յարբուսուստ ամ յամէ թոշակ առնելն եւ տային տանել նոցա ի միթարութիւն և կանա նց որ այն տաժանելի վշտակրութեանց մէջ դարձեալ չէին թոյլ թողած իրենց զաւակների կրթութիւնը եւ ջերմեռանդութեամբ հոգս էին քաշուս նոցա դաստիարակութեան վերայ Այս և եղել Հայ կինը միշտ եւ այդ պատճառով էլ Հայոց գերդաստունն և մնացել միակ աւանդուպահ մեր ներքին կեանքի ուր երկուս և Հայոց նախնական պարզութիւնը Հայ կինն էր որ շէն ու պատկառելի և պահել Հայ մարդու դառն քրտինքով կանգնած տունը շէն ու պատկառելի ոչ միայն հարուստ այլ աղքատ դասերի մէջն անգամ Արդ Հայ կնոջ այս հնարագիտութեան\*) պատկերն եղած է Նանէ դիցուհին, արի եւ իմաստուն Արամազդի հարազատ ծնունդը Այս ասպացուցուում է մասամբ եւ նորանով որ այժմու մեր մի քանի գաւառներում մօր կամ տանտիրոջ կոչումն և Նանէ կամ Նանի, Նան այս բառը թէ որ ուղենանք մեկնել Հայոց կամ ցեղակից լեզուների միջնորդութեամբ մենք գտնելու չենք ոչ մի կապակցութիւն ցեղակից լեզուների բառերի հետ այքի առաջ ունենալով որ մայրը միեւնոյն ժամանակ եւ սնուցիչ կամ ստնտու և թերեւս հիմք լինի կարծելու որ Հայոց Նանէ եւ Պարսից նան (հայ) բառերն արմատակից են եւ երկուսն էլ մտքով նշանակուում են սննդատու ինչպէս որ հայը մարդուս առօրեայ սնունդն և նմանապէս էլ մայրն և իւր զաւակների առօրեայ

(\*) Պէտք չէ շփոթել հնարագիտութիւնը կատարողներին հետ որ նոյնպէս կանանց սեռին յատուկ է եղած եւ առասպելների մէջ՝ մանաւանդ չար վնասակար հնարագիտութիւնը բարու պառաւներից և ծագում թէեւ այս կատարողական յատկութիւնն էլ նոյնն է ասպացուցանում ինչոր մենք ասացինք:

սմունդը: Եթէ այս այսպէս լինի, դարձեալ Նանէ դիցուհին կըմնայ մայրութեան եւ տանտիկնութեան գաղափարի պատկեր, որ բնաւ օտար չէ ոչ Հայի աշխարհաստեութեանը, ոչ նորա դարաւոր աւանդութիւններին եւ ոչ Հայր Արամազդի նման իմաստուն Էակի ծնօղական կոչմանը\*):

Հայր Արամազդի գերգաստան չորրորդ անգամն է նորա որդին Միհր աստուածը, որ « զգաստութեան, գեղեցկութեան եւ հնարագիտութեան » դիցուհիների հարազատ եղբայրն էր, ապա ուրեմն իւր հօր եւ քոյրերի նման բարի եւ պատկառելի նշաններ պիտի ունենար: Նորա մեհեանը գտնուում էր Բարձր Հայքի Դերջան գաւառում Բագայառ իծն աւանում, այստեղ կանգնեց Տիգրան Բ. Յունաց Հեփեսոսս կամ Վուլկան աստուածի արձանը: Ինչպէս վերեւն յիշեցինք, հին Պարսից մէջ այդ

(\*) Աւանդականների մէջ երկու կարծիք կայ. Նանէ դիցուհու ծագման վերայ մէկը կարծում է, իբրեւ թէ այս կոչումը սամալիտական նանա (մայր) բառի հետ կապ ունի. (տես P. de Zagarde, Armenische Studien). Թէև այս մեր կարծիքին ընդդէմ չէ, բայց որովհետեւ նանա բառը սամալիտ լեզուի մէջ ուշ կազմուած բառերից է, վամսոյ դժուար է ենթադրել, որ այդ բառը նոյնութեամբ դտնուած լինէր ցեղակից լեզուների մէջ, մանաւանդ իբրեւ աստուածուհի փոխարկուած լինէր Հայոց մէջ. այնուամենայնիւ սամալիտական նանա (մայր) բառն էլ նոյնն է ինչոր մեր գաւառականներում նանէ խօսքը: Երկրորդ կարծիքն այն է, որ Նանէ դիցուհու անունը նոյնն են համարում ինչօր Բարիլոնի աստուածուհին Իշտար, որն իբրեւ թէ նոյն Աստղիկն է եւ Ասորեստանում կոչուում է Նանա (տես Всеобщ. История Ассирии, пер. Эмман): Այս կարծիքից պէտք էր հետեւցնել, որ Նանէ դիցուհին աղղային տեղական աստուածուհի չէր, այլ մի եկամուտ ուն, այնպէս ինչպէս էին Գիսանէս եւ Գեմետր կամ այլ օտար աստուածները, որոնց պաշտում էին Հայաստանում: Սակայն այս սխալ է, որովհետեւ Նանէ դիցուհին աւանդութեամբ կոչուում է պարսկ. Արամազդայ, որ ցոյց է տալիս նորա բնիկ աստուածուհի լինիլը, մինչդեռ աւանդութիւնը ոչ մի այսպիսի ակնարկ չէ անում յասկապի օտար սաստածութիւնների վերայ: Բացի այս, Նանա կամ Նանէա կոչումը Երրայականի մէջ ասուում է Մրնի եւ նշանակում է բաղդի եւ մանաւանդ չար բաղդի ողի. մինչդեռ Բ. Մակար. Ա. գլ. 15, 15 տողերում չէ յիշուած Նանէա կոչումը, այլ ասուած է « եւ անդէն անկան կործանեցան շուրջ զՍնանեայ տաճարան. ի խորհուրդ յիմարութեան խորհեցան նորա զՆէեմայ տաճարան »: Այս խօսքերը ոչ մի կապ չունին Նանէ աստուածութեան հետ եւ դոցա մեկնութիւնը կարելի է տեսնել կարգադրվ Բ. Մակար. նոյն դրույթ 17—56 տուն:

անտուածութիւնը կոչուում էր Միթրա եւ համարուում էր Աստուծոյ զայն էակից եւ արժանակից. նորա մասնաւոր գործն էր հնչել ուխտաւորական վերայ եւ պարտել ուխտաւորութիւնն. նա էր այդ պատճառով եւ լոյսի ու օդի աստուածութիւնը. ինչպէս որ մի ծածկեալ (եւ անծանօթ իր կամ գործ բացուում ու յայտնի է լինում լոյսի եւ օդի օգնութեամբ) այնպէս էլ մարդկանց խարդախութիւնը, կեղծաւորութիւնը լոյս ձգօղնու բաց անօդը Միթրա աստուածն էր. նա ինքն անտեսանելի կերպով իշխող էր աշխարհիս վերայ, բայց նորա տեսանելի պատկերն էր արեգակն երկնքում եւ կրակն երկրիս վերայ, որոնք եւ այդ պատճառով պաշտելի էին մարդկանց մէջ, ի թիւս այլոց, իբրեւ լոյս անօղ, յայտնագործօղ պօրութիւն, Հայոց մէջ էլ անկասկած Միհրը (Միթրայ) նոյն նշանակութիւնն է ունեցած. որովհետեւ արեգակն եւ կրակ պաշտելն եղած է Հայոց մէջ. միեւնոյն ժամանակ նորա անունով կոչուում էր Հայոց ամիսներից մէկը Միհրական կամ Մեհեկան ամիսը, որ նշան է նորա ընդարձակ ժողովրդականութեանը. Միհրի անունն եղած է եւ մարդկանց համար յատուկ անուն, ինչպէս օրինակ Միհրան, Մեհրուփան, Միհրշապուհ, Միհրգատ, Մեհենգակ եւլն: Միեւնոյն երեւոյթները տեսնում ենք եւ Պարսից մէջ, որից պիտի մակարերենք թէ Հայոց Միհր աստուածը նոյն ընդարձակ նշանակութիւնն է ունեցած, ինչորհին Պարսից մէջ է ունեցել. նորա ժողովրդականութեանը նայելով պէտք է կարծել, որ այդ աստուածութիւնը պատկերացնում է մասնաւորապէս Հայոց հասարակական ուղին. մի յատուկութիւն, որ Հայոց մէջ միշտ առաջնակարգ առաքինութիւնների շարքումն է եղել: Թէպէտեւ մեր լեզուի մէջ չենք գտնում այդ միտքը ապացուցանող մի բառ կամ գարձուած, բայց Պարսից լեզուի մէջ կան մի երկու գէպքեր, որ Միհրի այդ յատուկութիւնն են բացատրում. արդի Պարսից լեզուով միհր նշանակում է սէր, իսկ միհրբան — բարեկամ, սիրելի. այս հանգամանքը մեզ տեղիք է տալիս կարծելու, որ գործածութիւնից գուրս եկած հեթանոսական Միհր խօսքի տեղը մտել եւ ընդհանրացել է սէր խօսքը. եւ այն՝ որ սիրով է վարուում իւր ընկերի հետ, այն՝ որ բարեկամութեան կապը

սուրբ է պահում, այն՝ որ հաւատարիմ է, այն եւ կոչուում է «էրէ»<sup>\*</sup>):

Հայր Արամազգի գերդաստունն ամբողջացնելու համար հարկ է խօսել թէ ի՞նչ էր նորա կնոջ անունը եւ ի՞նչ գաղափարի պատկեր էր նա: Այս հարցին մինչեւ հիմայ, եթէ չենք սխալուում, տակաւին ոչ ոք մտեցած չէ, այդ պատճառով մենք կաշխատինք, որքան կարելի է, մանրամասն բացատրել մեր միտքը: Մեզ այնպէս է երեւում, որ Հայոց աստուածներն թափուհին կոչուում էր Սպանդարամետ եւ նորա մէջ պատկերացած է եղել երկրի ծննդականութեան գաղափարն անտեսանելի կերպով, իսկ նորա տեսանելի պատկերն եղած է սոյն իսկ երկիրս, գեաինը, որ ինչպէս յայանի է, իբրեւ մայր ծնանում եւ բուսուցանում է ամենայն ինչ: Հետեւնս Հայերն գաղափարով իմաստութեան պատկերն Արամազգի երկնքի գերագոյնէակը՝ մի անսահման գոյութիւն գոյով՝ չէր կարող օգտակար լինել հասարակութեանը չունենալով մի ներգործութեան առարկայ: Ինչպէս, որ մի հասիկ սերմն, որ ինքն ըստ ինքեան թէ եւ աղնիւ բան է, բայց անօգուտ է, իսկ եթէ պատշաճաւ որ հողի մէջ ձգուի կրեղմնաւորի եւ կրպիտոյանայ, այնպէս էլ իմաստութիւնն իւր ամենակարող զօրութեամբ, ի թիւս այլոց՝ կարող է մարմնանալ մարդկանց աչքի առաջ երկրիս պողպտեթեան եւ մշակութեան մէջ: Աւստի Հայր Արամազգի նման իմաստութեան գերագոյն էակի լծակիցն է արժանապէս երկրիս ծննդականութիւնը, Սպանդարամետը: Այս հաստատուում է մի քանի ցուցումներով:

Նախ որ՝ Սպանդարամետ կոչումն իւր հնութեամբ եւ իւր սկզբնական նշանակութեամբ համապատասխանում է մեր ստածին: Չենգալէստայի մէջ Ահուրամազգայի վեց աթուակիցներից, այսինքն Ամեշասպանտաներից մէկը, որի մէջ յատկապէս մարմնացած էր գերագոյն խոհականութիւնը, կոչուում էր Արմայիաի: այդ Ամեշասպէնաան իգական սեռից էր եւ համա-

(\*) Մինչի աւելի ընդարձակ ժողովրդականութիւնն երեւում է եւ այն ամօրց, որ կատարուում է փետրվարի 15ին (Մեհեկան ամիս) Տէրընտաղ անունով: Հայոց անձանտական ամենի վերայ խօսելիս կաշխատենք աւելի պարզել մեր միտքը:

բուռում էր: Չենգալէն ապի խօսքերին նայելով, մերթ ամուսին եւ մերթ դուստր Ահուրամազդայի այդ գիցուհու անուանից անբաժան էր միշտ սպէնաս ածականը: որ, ինչպէս վերելք տե-  
 անք, նշանակում է սուրբ \*): քայք կարող է նշանակել եւ  
 աճեցուցիչ, այնպէս որ Սպէնաս Արմայիտի նշանակում է խո-  
 Տականութիւն կամ իմաստութիւն անարատ, սուրբ, եւ իմաս-  
 տութիւն աճեցուցիչ, ծննդական. աւելի այս վերջին նշանակու-  
 թեան պատճառով է թերեւս, որ Չենգալէն ապի մէջ Սպէնաս  
 Արմայիտի անտուած ուհու մասնաւոր հոլանաւ որութեան տակն  
 է յիշուում եւ այս երկիրս, գետինը ուստի հին Պարսիկները  
 ինամակաւ աստուած ուհու անուանով ինամակն Լուսայինքն այս  
 երկրն սուր էին Սպէնաս Արմայիտի ուրեմն գեռ Չենգալէն ապի  
 նման հնագոյն յիշատակարանների մէջ այդ կոչումն երկու  
 աստուածութեան է տրուած — ա) Սպէնաս Արմայիտի խոհա-  
 կանութեան աստուած ուհու եւ ք): Սպէնաս Արմայիտի երկիր  
 ցամաք Գալով հայերէն կոչմանը մենք տեսնում ենք: Սպան-  
 դարամետ քառք յիշեալ երկու գենդական կոչումներէջ է կազ-  
 մուած: այսինքն Սպանդ Արամետ որ նոյն է թէ Սպէնաս Ար-  
 մայիտի մեզ բնաւ դարմացում է չէ այն որ Սպէնաս Արմայիտին  
 եղել է Սպանդ Արամետ ոչ ապաքէն դարերի հոսանքը եւ ազ-  
 գերի փոխադարձ դարգացումը ընդունակ են աննշմարելի կեր-  
 սով յեղյեղելու ժողովրդի բերանում ամենայն մի անուն այն  
 աստիճանի որ բնու ճանաչել անգամ անկարգի լինի ոչ ա-  
 ղաքէն կայ տարբերութիւն Ահուրա - Մազդա եւ Արամազդ:  
 Միթրա եւ Միհր ձայների մէջ, քայք ոչ որ կասկածել չի կա-  
 րով թէ այդ անունները նոյն են, այնպէս ինչպէս նոյն է ամե-

(\*) Սպէնաս ածականի արմատն է սպան = աճեցնել, բուսցնել, սրանից եւ սպան ածականի իբր նշանակում է աճեցուցիչ, աճումն տուող, սորան համեմատ է Լատինական augustus = աւգոստոս բառը, որ նոյնպէս զործադրուում է սուրբ բառի տեղը, քայք իբր նշանակում է աճեցող: Հին Պարսից գաղափարով սուրբ այն մարդն է, որ ծղոտւմ է աճումն տալու, աճեցնելու բարի արարչի Ահուրա- մազդայի փառք, ուրեմն նուազեցնելու իւր եւ անդուն զիմադրութեամբ չար Արմայիտի փառք չէղորացնելով բար սորա չար խորհուրդները, (տես Justi, Handbuch der Zendsprache):

նայն մի յատուկ անուն զանազան ազգերի մէջ, զորօրինակ Յովհաննէս, Իւան եւ Ժան, Յակոբ, Եակօֆ եւ Ժակ, Յովսէփ, Իօսիֆ եւ Ժօղէֆ, Պետրոս եւ Պիէր, Միհրդատ եւ Միտրիդատէս եւ այլն: Այսպէս ուրեմն այն աստուածութիւնը, որ Չենդալէստայի մէջ իբրեւ կին կամ գուտր Ահուրամազդայի կոչուում էր Սպէնտա Արմայիտի, հայերէն կոչուում է Սպանդարամեա եւ կապուած էր Արամազդի հետ նոյն կապերով: Բայց այդ նոյն աստուածուհու խնամքի տակ գանուող երկիրս էլ, ինչպէս Չենդալէստայի մէջ կոչուում է Սպէնտա Արմայիտի, հայերէն էլ կոչուում է Սպանդարամեա կամ աւելի ստէպ Սանդարամեա. այս վերջին կոչումն աւելի շատ գործ է գրքունում եւ քրիստոնէութեան ժամանակ դժօրքի այսինքն երկրիս խորքերը հասկացնելու համար. այս դէպքում, ինչպէս մի քանի ուրիշ խօսքերի մէջ էլ պատահած է, պիտի կորչուի եւ երկու խօսքը միացած փոխանակ Սպանդ Արամեաի ասուում է Սանդարամեա:

Երկրորդ որ Հայոց հին աւանդութիւններն էլ հաստատում են, որ Սպանդարամեա աստուածութիւն եղած է, եւ նոյն կրկին նշանակութիւնն եւս ունեցած է. զորօրինակ Եղեկիէլի մարգարէութեան մէջ Գլ. 15. 16 կարդում ենք «իձայնէ կործանման նորա դրոգեցան ազգք, յորժամ իջուցի զնա ի դժօխս ընդ իջեալսն ի դուր. եւ մխիթարէին զնա ի Սանդարամեան ամենայն ծառք փափկութեան եւ այլն . . . նմանապէս Ագաթանգեղոսի մէջ եր. 272 կարդում ենք «եւ եկն էջ եհատ մինչեւ մօտ ի յատակս երկրիս ի շինամէջ քաղաքիս եւ բախեաց զթանձրութիւն յայնատարած գեանոյս եւ մեծ եւ անչափ թնդիւնք հնչեցին է Սանդարամեա անդհոց:» Այս օրինակները մէջ պարզ երեւում է, որ ինչպէս Չենդալէստայի մէջ երկիրս կոչուում էր Սպէնտա Արմայիտի, այնպէս էլ մեր ս. թարգմանիչք երկրին, դժօրքին Սպանդարամեա կամ Սանդարամեա անուն են տալիս, ի հարկ է, աւանդութեանն հետեւելով. բայց կայ յիշատակութիւն եւ Սպանդարամեաի աստուածային անձն լինելու վերայ, թէեւ շփոթ գաղափարներով, զոր օրինակ Ս. գրքի թարգմանիչներն Բ. Մակաբ. 2. Գլ. 7 տան մէջ այսպէս են ասում. «վարէին ածէին ստէպ ստէպ յամսաւոր յօր տօնի

ճննդեան թագաւորին, զի զոհեցեն: Իբրեւ տօն հասանէր Սպանդարամեաւեան պաշտամանն, տաղնապէին զնոսա՝ պրտակեալս թաւ ստօք Սանգարամեայն կարաւել: Եւ այստեղ ինչպէս դժուար չէ նշմարել, Սպանդարամեար, ոչ թէ որ ժողիքն է կամ երկիրս, այլ մի աստուածային անձն եւ որքան որ ս. Իբրքի բնագրին հմտութեամբ նկատած են (\*), ապա եղ ս. թարգմանիչք Սպանդարամեար Յունաց Բարսի տեղն են դրած, որից երեւում է, որ դա մի արաբսն աստուածութիւն է եղել: Եւ յոր հաստատութեւ է եւ Թորեհայե խօսքերով գիրք Գ. Գլ. 62, մեր Սանգարամեայեան աստուծոյ դարձեալ հասկացնում է մի անձնաւորութիւն, բայց անբեր նշանակութեամբ: Արտահետեւ Սպանդարամեար միեւնոյն ժամանակ երկիրն է ներկայացնում, ուստի այդ տեղիք է տուել կարծելու (\*\*), որ երկրագործութեան աստուածուհի է եղած այսինքն այն ինչոր Հաւիմայեցւոց Յէրէս գիցուհին էր: Այսպէս ուրեմն մի Սպանդարամեա անունով աստուածութեան գոյութիւնն Հայոց մէջ՝ հաստատուում է Հայոց աստուածութիւններով: Եւ որովհետեւ ս. թարգմանիչք դեռ Ե. րդ դարում Գ. 10. երկու նշանակութիւն են դրել Սպանդարամեա անունն մէջ, ապա ուրեմն այդ երկու նշանակութիւնն էլ ժողովրդական են եղած եւ նորահաս ժողովրդի համար խորդ ու անճանօթ գաղափարներ չէին. ուստի չենք ռիսկուիր, եթէ ասելու լինինք, որ մինչեւ անգամ երկու նշանակութեան ներքին տարբերութիւնը ցոյց տալու համար գիտութեամբ զանազանութիւն են ձգել նաեւ արտաքին հրէման մէջ. Սպանդարամեա՝ աստուածութիւնն էր յայանում, իսկ Սանգարամեա՝ երկիրը, որովհետեւ այդ երկու կոչումն էլ միեւնոյն էակինն էր, այդ պատճառով առաջինը, որ մի վերացական գաղափար է, աւելի շուտ է մոռացուել եւ մընացել է ժողովրդի գաղափարի մէջ միայն երկրորդը:

Եւ երրորդ Սպանդարամեաի սրբութիւնն իբրեւ աստուածուհի պատկերացած Հայոց առասպելութիւնները մէջ, ուր

(\*) sive Z. de Pagarde, Armenische studien.

(\*\*) sive Բարսիք, Արքայի:

Գաղափարը երկրի որբութեան հետ է միացած, այս կէտն է որ  
 պարզում է Չենդավէստայի յայտնած երկմտութիւնը  
 այնտեղ Սպանտ Արամետը կամ կինն է Ահուրամազդայի  
 կամ դուստրը այնտեղ Հայոց առասպելութեանց մէջ յայտ-  
 նի երեւում է որ երկիրն — Սպանդարամետը երկնքի — Արա-  
 մազդի կինն է այս երեւում է Հայոց Անհագնի երգից որ  
 ժողովուրդը կամենալով յայտնել այդ անհուն քաջի գերբ-  
 անկան ծնունդը առաջապէս է թէ այդպիսի մեծութիւն Հա-  
 յոց քաջութեան նախագաղափարը չէր կարող մարգիկեղէն  
 ծնունդ ունենալ այլ միայն անտուածային եւ ո՛րքէն նորա  
 ծնողք հայրն է երկինքը որ պատկերացած է լուսաւոր  
 Արամազդի մէջ մայրն է երկիրն որ պատկերացած է արե-  
 ցունիչ Սպանդարամետի մէջ իսկ որրանն է զուարթ Հայաս-  
 տանի ամենապայծառ տեղը ծիրանի ծովը . . . Ահա այն երգի  
 խօսքերը . . .  
 Երկնէր երկին եւ երկիր զգնմիկած դո ցծուսն  
 միայն զս շա երկնէր եւ ծիրանի ծով . . .  
 Երկին ի ծովուն ունէր զկարմրիկ եղէգնիկն  
 Ընդ եղեգան փող ծնւիւ ելանէր . . .  
 Ընդ եղեգան փող բոց ելանէր . . .  
 Եւ ի բոցոյն խարտեաշ պատանեկիկ վազէր  
 Եւ նա հուր հեր ունէր . . .  
 Ապա թէ բոց ունէր մօրոն . . .  
 Եւ ակունքն էին արեգակունք . . .  
 Այս երգը որ ի թիւս այլոց պայտուցանում է թէ հե-  
 թանոս Հայերն աստուածացնում էին երկինքն ու երկիրը  
 ոչ այլ ինչ է հաստատում եթէ ոչ այն որ երկիրս այսինքն  
 Սպանդարամետ դիցնուհին երկնքի այսինքն արի Արամազդի  
 ամուսինն է եղել . . .  
 Այս պատկերից հետեւում է որ Սպանդ Արամետ աստուա-  
 ծու հին մեծ մասալը համապատասխան է Չենդավէստայի  
 Սպէնդա Արմայիտի անտուածուհուն . . . Հայոց մէջ այդ աս-  
 տուածուհին պաշտելի էր իւր անցողից զօրութեան իւր  
 ծննդականութեան համար երկրագործութեան յառաջագէմ  
 աշխարհներից մէկը մեր Մայր Հայաստանն անկասկած այդ

պիսի մի աստուածութեան՝ գահալիար պիտի ունենար իւր սրբութեանց շարքում։ քանի որ նոյն խմկ երկիրը ամենայն երկրագործ ազգերի մէջ միշտ աստուածայած է եղել։ Հայերն եւ ցեղակից ազգերը՝ համեմատաբար միեւնոյն անտեսական պայմանների մէջ գտնուելով, ոչ միայն այգպիսի մի յասկանցեալ աստուածութիւն են սւնեցած երկրի այսինքն գետնի նուիրականութեան վերայ, այլ մինչեւ անգամ՝ բուսականութեան եւ այլ նորան նպաստող տարրերի համար են ջոկ ջոկ սրբութիւններ կամ ոգիներ են սւնեցած։ Այսպէս օրինակ լեռների պահապան բարի ոգիները կոչուում էին «աջ այս ցոյց է տալիս Հայոց խաշնաբածութեան զարգացումը ջրերի պահապան եւ խնամակալ ոգիները կոչուում են հօրօ կամ հօրնու որ մինչեւ այժմ էլ յիշուում է ժողովրդի մէջ անկերի պահպան եւ խնամակալ ոգիները կոչուում են հօրօ կամ մօրուտ այնպէս որ այսօրուայ հօրօ հօրօ ասուած դարձուածը որ ծաղիկների անուն էլ է ոչ թէ՛ բամակական բառախաղ է, այլ դարաւոր հնութիւններից մնացած, ոչ միայն Հայոց մէջ, այլ եւ Պարսից եւ այլ ցեղակից ազգերի։ եւ յառաջ է եկել Զենդական Հաւերուտա եւ Ամէրէտաա Ամեշասպանտաների կոչումից, որոնք նոյնպէս ջրերի եւ անկերի պահպան ոգիներն են եղած։ շատ անգամ Զենդալէտաայի մէջ «Հաուրիտա Ամէրէտաա» նշանակում է նաեւ «փայտ եւ ջուր» \*)։ Նոյն կոչման աղծատեալ ձեւն է Պարսից Ամուրդատ եւ Մուրդատ անուններն, որ բամակօրէն եղել է եւ Մարուտի արուտի այսինքն ինչպէս հայերէն ասում ենք հօրօ մօրօ, այս շօրձա Մօրձաի սրբութեան պատկերն է, որ դեռ շատ հին ժամանակներն Հայոց աստուած պաշտութեանտեղն էր, եւ Արամալիի սօսիները դիցանուէր անտառ, արմարի Այս ամենից զատ եղել է եւ պտուղների խնամակալ աստուած Ամենաբեղ անունով, այս Ամենաբեղն էր, որ միթարում էր հեթանոս այգեպանին իւր քրտանց պտուղն առաւորութեամբ տեսելու որովհետեւ Հայաստանի նման լեռնավազան աշխարհում շատ ծայրայեղութիւնք կան ջրուտ եւ քաջուտ մտկիւն ծղոյրայրից՝ գանա՞ մտկիւն մայրամբ

(\*) sicut Justi, Hand, d. zend.

Թեան երեւոյթների մէջ. յանկարծակի գրտեր, տեղատարափ  
 անձրեւներ, քարահիտշկոճ կարկուտներ՝ եւ այլն այնքան շատ  
 են պատահում, որ յաճախ հոյն իսկ հաստեւացած պտուղ-  
 ներն էլ չարաչար վնասում են. այդ պատճառով եւ Ամե-  
 նաբեղ աստուածը շատ սիրելի ու պաշտելի էր եղած Հա-  
 յաստանում. նորա պաշտամունքն երկրորդական աստուածների  
 մէջ ամենից վառաւորն էր եւ կատարուում էր Բագրեւան-  
 դի Բագաւան կամ Գիցաւան կոչուած անունով. այստեղ  
 Կարին մի անգամ այն օրերն, երբ Հայոց պտուղները հա-  
 ստեւանալու վերայ էին, հաւաքուում էր հեթանոս Հայ  
 Ժողովուրդը եւ անխարհասիւճւմը մի ասոն էր կատարում  
 հաւասարդի մէկից մինչեւ վեցը. եւ օրով հետեւ Ամենաբեղ  
 աստուածը ստոյն տարեգլխին էր կատարուում, ուստի նորա  
 անուններից մէկն էր եւ Ամանօր, որ նշանակում է տարին  
 նորոգօղ. այս մի հանգէս էր, որի յիշատակը մինչեւ մեր  
 օրերը մնացած է. այնտեղ ժողովուած բազմութիւնն ան-  
 շուշտ պատարագ էր բերում իւր պտուղներից անդրանիկ-  
 ները եւ շատ անանձին հանդէսներ էր կատարում միար-  
 շաւ անելով, եղջերու վազնելով կամ աղաւնի թռչնելով,  
 ի սլատիւ այն աստուածութեանը, որ պահասան է պտուղ-  
 ների եւ նոցանով անունը է տալիս մտրդկանց եւ կենդանի-  
 ներին. Այս հանդէսների յիշատակը մնացած էր մինչեւ Գրի-  
 գոր Մագիստրոսի օրերը, որ նա Արտաշէս Բ. ի խօսքերն յի-  
 շում է թէ Ռոմայր ինձ զծուխն ծխանի եւ զաւաւտան  
 նաւասարդի, զվագել եղանց եւ զվագել եղջերուացի, մեր փող  
 հարուաք եւ թմբկի հարկանէաք, Բագաւանը մի այնպիսի  
 անխարհասիւճւմը ուխտատեղի է եղած հեթանոս Հայերի համար,  
 որ Տիգրան Գ. թագաւորը այնտեղ մի անանձին հիւրատուն  
 եւս շինեց ու իւր եղբօր Մաթան քրմապետի գերեզմանի վե-  
 րայ մի մեհեան կանգնելով հրամայեց, որ բոլոր օտարական  
 անցորդները կարողանան պատուարան գտնել այն հիւրատան  
 մէջ եւ կերակրուին այն մեհեանի զոհերից եւ պատարագներից.  
 այդ հանգամանքը պատճառ եղաւ, որ հեթանոս Հայերն Ամե-  
 նաբեղ Ամանօր աստուած ճանաչեցին իբրեւ հիւրընկալ աս-  
 տուած եւ կոչեցին նորան Վանապար. այս վերջին մականունն

էլ միանգամայն Հայոց սովորութիւններն եւ աշխարհատեսութեան ճշմարիտ հայելին է: յայանի է, որ բոլոր հին եւ նոր ազգերը Հայոց ազգի հիւրասիրութիւնը նորա ամենագոյնի յատկութիւններից մէկն են համարում: որն եւ մինչեւ ցայսօր յատուկ է Հային: մինչեւ իսկ գիւցաղնական դարերից մնացած է մինչանաւոր ականգութիւն Հայոց հիւրասիրութեան վերայ, որի օրաայայտութիւնն է Երուանդ Սակաւակեանցի թագաւորութեան օրով Հայաստան գաղթող Վարդգէս մանկան հնարգարեան երգը. « Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց գաւառէն դՔասաղ գետով, եկեալ նստեալ զՆրէշ բլրով զԱրտիմէտ քաղաքաւ դՔասաղ գետով կռել կոփել զգուռն Երուանդայ արքայի: » Նոյն հիւրասիրութեան արտայայտութիւնն է, որ Հայոց երկիրը լցուում էր անդադար խառն իճագանձ՝ գաղթականներով եւ նորեկ ազգերով: Ահա Հայի այս հիւրասիրութեան գաղափարն է, որ ներկայացնում է Ամենայնեղ անուածը. եւ նորան կրկայելէր այդ առաքինութիւնը՝ օրովհետեւ հիւրասիրութիւնը կրթագաւորէ մեծ ողորդութեամբ, երբ նա ոչ թէ կարօտութեան մէջ լինի, այլ նորա տունը լի եւ անատ լինի եւ ունենայ խոհեմ անաեսութիւն: ահա այդ երկու լաւ յատկութիւններն Հայոց գերգաստան մէջ անդտիան են: Ամենաբեղն ամենայն առատութեամբ պարգեւում է Հային առատ անունը նորա ընտանի կենդանիներին կերակուր՝ անատ մրգեղէններ, ընդեղէններ, արմախք այլեւ տնական զանազան զէններ, եւ ծանկ գիցու հին սամտիկնոջ հօգու մէջ բնակելով անտեսութեան, հնարագիտութեան հանձարով կառավարում է Հայի տունը: յմաւարա՞ « ցաւմայկա՞ վիցի՞ յմ ցաւոյա՞

Պարանգարամեա գիցու հու աջակիցներն էին անշուշտ Հօրօտն ու Մօրօտ: Մասնայ քաջերն ու Ամենաբեղ եւ գուցէ մայր ուրիշ առտուածութիւններ, որոնք տակաւին մեզ անճանօթ են: Նորա էին երկրիս ծննդ տկանութեան, օգտակարութեան մասնաւոր յառաջացուցիչները եւ նոցա գեղակից էին անշուշտ այն ողորները, որ Զենդալէստային նայելով կերակրին համեղութիւն օգեքին քաղցրութիւն, անձրեւներին առատութիւն էին տալիս: Հայոց աստուածութիւնների ակումբն ամբողջացնելու համար մեզ մնում է յիշել եւ Տիր աստուած անունը: սա էր Արամագ

գի դպիրքը՝ աւանդութիւնն անուանում է նորան՝ նաեւ դպիր գիտութեան քրմաց, ուսումն ճարտարութեանց, երազացոյց եւ երազընդհան։ Սորանից երեւում է, որ Տիրն էր աստուածներէ եւ քրմերի մէջ միջնորդ եւ հրեշտակ։ Նա էր յայտնում երազների դատանիքը, նա էր ուսուցանում գիտութիւններն եւ նա էր աստուածներէ համար դպրութիւնն այսինքն գրագրութիւնն անօղբ Այս յատկութիւններից մէկը մինչեւ հիմայ մի խորհրդաւոր կերպով մնացել է Հայոց պառաւներէ բերանում, երբ ասում են «գրօղբ քեզ տանի» որ անշուշտ Տիրն է նմանապէս մնացել է երազ մեկնելու կախարհութիւնը, եղունգին նայե՜ յելով գուշակութիւն անելն եւ այլն, որ նոյնպէս հին հեթանոսութեան հետքերն են։ Տիր աստու պաշտամունքի տեղն էր երեւանու եւ Արարչատի մէջ տեղն Երազմոյն ասուած աւանում, իսկ նորա պատկերը կոչուում էր Տրիդիք \*):

Այս խոշոր աստուածութիւնների համառօտ եւ հարեւանցի տեսութեամբ վերջացնում ենք այս անգամ մեր խօսքը Հայոց հեթանոսութեան վերայ։ Եթէ յաջողի մեզ իւր ժամանակին կաշխատինք պարզելու նախ մանր աստուածութիւնների եւ ոգիների գաղափարն, եւ երկրորդ չար աստուածութիւնների եւ ոգիների վերայ եւս սրբան կարելի է մի ամփոփ տեղեկութիւն տալու։ Բայց եւ այնպէս այն ինչոր ասացինք մինչ ցարդ Հայոց հեթանոսութեան վերայ թէպէտեւ շատ թերի է սակայն ներկայացնում է մեզ հին Հայ ժողովրդի գաղափարների հայելին, Հային ճանաչել են շատ ազգեր իբրեւ ուսման սէր ու գիտութեան ճարու ունեցող ազգ։ Ճանաչել են նորան իբրեւ մօքրան սէր բարքի տէր ազգ, խոյս տուող չար եղեռնագործութիւններից, խոյս տուող աղտեղութիւնից, ճանաչել են նորան իբրեւ մի հնարագէտ ու տնարար ազգ, սիրող շինութիւնն ու հաստատութիւն, սիրող յառաջադիմութիւն, ճանաչել են նորան իբրեւ հաւատարիմ եւ տիրասէր ազգ, ձգտող պահպանելու իւր

(\*) Եթէ այս անունը Տիր բառից է, այլ ոչ Տուր, հաւանական է, որ Տիրացու բառն էլ այդ հին անունից մնացած լինի, որովհետեւ Հայոց մէջ այդ պատուանունը մի ժամանակ շատ ընդարձակ նշանակութիւն ունէր. Տիրացու եւ գիտական մի ժամանակ գրեթէ նոյնանշան էին։

անբարձր և անբարձր յարգող երգման նշանակող թիւեր. Ըստնայել են  
 հիւրասեր եւ իւր հանցն ու ձեռքը ուրիշին չխնայող բացի այն  
 պակաս չեն եղել Հոյսից միջից քաջութեան ու յարթութեան  
 սքիւն որի կենդանի պատկերը տեսնուի ենք Հոյսից պատմու  
 թեան մէջ մանուկանոց անոր անընդձեռի մարտման մէջ Մի  
 ջնգեաբի աշխարհակալներին հետ. \*) նմանապէս յայտնի է որ  
 Հոյսից ընդհանուր պարագային չեն երկրիս մշակութիւնը որ  
 Հայն իւր հոգի վերայ եւ օտար երկրներու մեր բէք բահն ու  
 խնամք ձեռքից թողած չէ. և Հայն այս գեղեցիկ յատկութեան  
 ներքո որ անկասկած դարաւոր փորձուցութեան եւ քաղաքա-  
 կան գիւրափոփոխ հանգամանքներից անուէլ եւ առաւել մի-  
 շնակուում էին նոյնչափ հին են որչափ հին են նոյն փոխ Երա-  
 մազգի. Սպանդ Արամեանի, Անահիթի, Ահազանի, Նանեի եւ  
 այլ սոցա նման նուիրական սրբութիւններու անունները. և և և և

Յրանստեղծութիւնները իւրեանց իրաւունք կհամարեն Յրանստեղծի  
 եւ Յրանստեղծներին հետ հարաբերութեամբ վարել: Եւ Յրանստեղծ  
 կանոնացի իւր գերը Յրանստեղծները պապի հաւատարիմ գին-  
 ւորներ են, աղատատէր Գերմանեան կառնապանէ եւ ընդհանր  
 քաղաքակրթութիւնը կղերական Յրանստեղծի գէմ. և յայտէս  
 կխօսին Գերմանացիներն, որոնք իւրեանց կեանքի նպատակը  
 շինած են որ եւ իցէ հնարով Յրանստեղծից բարձր գիրք բռնե-  
 լու քաղաքակրթութեան մէջ Եւ այց թէ հնարաւոր է արդե՞ք  
 պատմութիւնը քննաբարել, սորա մասին կարծես մոռացած են  
 ներկայացրէք ձեզ, որ Յրանստեղծ յանկարծ կործանուէր, այն-  
 պէս ինչպէս կկործանուի մի նոր տուն, ներկայացրէք ձեզ, որ  
 այդ օրից մենք գաղարէինք ստանալ Յրանստեղծի թէ ֆրանսա-  
 կան լրագիրներ, թէ ֆրանսական գրքեր եւ ամեն գիւտեր եւ  
 ամեն տեղեկութիւններ: Մի խօսքով ներկայացրէք ձեզ, որ աշ-

ՅՐԱՆՈՒԹՅԱՆ ԵՆՍՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՆՍՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՆՍՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՆՍՆԱԿՈՒԹՅԱՆ  
 ԵՆՍՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՆՍՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՆՍՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՆՍՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՆՍՆԱԿՈՒԹՅԱՆ

Գերմանացիները իւրեանց իրաւունք կհամարեն Յրանստեղծի  
 եւ Յրանստեղծներին հետ հարաբերութեամբ վարել: Եւ Յրանստեղծ  
 կանոնացի իւր գերը Յրանստեղծները պապի հաւատարիմ գին-  
 ւորներ են, աղատատէր Գերմանեան կառնապանէ եւ ընդհանր  
 քաղաքակրթութիւնը կղերական Յրանստեղծի գէմ. և յայտէս  
 կխօսին Գերմանացիներն, որոնք իւրեանց կեանքի նպատակը  
 շինած են որ եւ իցէ հնարով Յրանստեղծից բարձր գիրք բռնե-  
 լու քաղաքակրթութեան մէջ Եւ այց թէ հնարաւոր է արդե՞ք  
 պատմութիւնը քննաբարել, սորա մասին կարծես մոռացած են  
 ներկայացրէք ձեզ, որ Յրանստեղծ յանկարծ կործանուէր, այն-  
 պէս ինչպէս կկործանուի մի նոր տուն, ներկայացրէք ձեզ, որ  
 այդ օրից մենք գաղարէինք ստանալ Յրանստեղծի թէ ֆրանսա-  
 կան լրագիրներ, թէ ֆրանսական գրքեր եւ ամեն գիւտեր եւ  
 ամեն տեղեկութիւններ: Մի խօսքով ներկայացրէք ձեզ, որ աշ-

(\*) Տես Արարատ, 1878 ամի, ձգ.